ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ № 1
№ ԳՀԾՁԲ-21-20/1-2 ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ

ք. Երևան 06 -ը ապրիլի 2021թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ Ս. Սահակյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա՝ այսուհետև Պատվիրատու, մի կողմից և «Արման Սվազյան» Ա/Ձ-ն՝ այսուհետև՝ Կատարող, մյուս կողմից, հիմք ընդունելով 12.02.2021թ. կնքված № ԳՀԾՁԲ-21-20/1-2 գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 7.15 կետը, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն Համաձայնագիրը (այսուհետև՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

1. Համաձայնագրի առարկան

1.1 Սույն Համաձայնագրով Կատարողը պարտավորվում է Պայմանագրով սահմանված կարգով և ձևով Պատվիրատուին կամ նրա կողմից որոշված Ստացողին (այսուհետև՝ Ստացող) մատուցել Պայմանագրի N 1 Հավելվածով՝ Տեխնիկական բնութագրով նախատեսված ծառայություն (այսուհետև՝ Ծառայություն), իսկ Պատվիրատուն (Ստացողը) պարտավորվում է ընդունել այդ Ծառայությունը և վճարել դրա համար:

2. Համաձայնագրի գինը և վճարման կարգը

2.1 Կատարողի կողմից մատուցվելիք Ծառայության առավելագույն գինը /գումարը/ ներկայացված է Համաձայնագրի անբաժանելի մասը կազմող Հավելված N 1-ում: Համաձայնագրի առավելագույն գինը կազմում է **2 000 000 (երկու միլիոն) ՀՀ դրամ,** որը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

2.2 Պատվիրատուն մատուցված Ծառայության դիմաց վճարումը կատարում է Պայմանագրի 4.2 կետին համապատասխան, եռամսյակներում առկա միջոցների հաշվին, բայց ոչ ուշ, քան 10.12.2021թ. (Հավելված N 2):

3. Այլ պայմաններ

3.1. Սույն Համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը, ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի փոխադարձ պարտավորությունների լրիվ կատարումը:

3.2 Սույն Համաձայնագրում չնշված՝ գնման Պայմանագրով նախատեսված դրույթները, պայմանները, Կողմերի իրավունքները և պարտականությունները, Ծառայության մատուցման, հանձնման-ընդունման, Կողմերի պատասխանատվության հետ կապված և այլ հարաբերություններ թողնվում են անփոփոխ:

3.3. Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

3.4. Սույն Համաձայնագիրը կազմված է 2 թերթից, հայերեն լեզվով, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր Կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն Համաձայնագրի № 1,2 Հավելվածները բաղկացած են 1 թերթից և հանդիսանում են Համաձայնագրի անբաժանելի մասը:

3.5 Պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում ՀՀ ՋՈՒ ինժեներական զորքերի վարչությունը:

4. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունը:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ պաշտպանության նախարարություն ք. Երևան Բագրևանդի 5 ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն Հ/Հ 900011144079 ՀՎՀՀ 02522157 ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ Ս. ՍԱՀԱԿՅԱՆ	«Արման Սվազյան» Ա/Ձ ՀՀ, ք. Երևան, Խուդյակովի 17 տուն "ԱՄԵՐԻԱ ԲԱՆԿ" ՓԲԸ Հ/Հ 1570035239150100 ՀՎՀՀ 25390248 Ա. ՍՎԱԶՅԱՆ

Հավելված N 1
№ ԳՀԾՁԲ-21-20/1-2 գնման պայմանագրի
N 1 համաձայնագրի

ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Հ/հ	Ծառայությունների անվանումը	Չ/մ	Քանակը	Առավելագույն գինը /գումարը/ (ՀՀ դրամ)	Ծառայությունների մատուցումը 2021թ 2-րդ, 3-րդ, 4-րդ եռամսյակներում, բայց ոչ ուշ քան 01.12.2021թ.
1	Ռազմական հատուկ մասնագիտական տեխնիկայի, սարքերի սպասարկման և նորոգման ծառայություններ /ինժեներական ունեցվածքի վերանորոգում/ էլ. ագրեգատ// այդ թվում՝ էլեկտրաագրեգատների վերանորոգման ծառայություններ	դրամ	1	2000000	ըստ հայտերի

Ծանոթություն՝ բացվածքը ներառված է **պայմանագրի հավելված 1-ում:**

Հավելված N 2
№ ԳՀԾՁԲ-21-20/1-2 գնման պայմանագրի
N 1 համաձայնագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Հ/հ	Ծառայությունների անվանումը	CPV կոդը	Նախատեսվում է ֆինանսավորել 2021թ. ըստ եռամսյակների, բայց ոչ ուշ, քան 10.12.2021թ., ընդ որում		
			2-րդ եռամսյակ	3-րդ եռամսյակ	4-րդ եռամսյակ
1	Ռազմական հատուկ մասնագիտական տեխնիկայի, սարքերի սպասարկման և նորոգման ծառայություններ /ինժեներական ունեցվածքի վերանորոգում/ էլ. ագրեգատ// այդ թվում՝ էլեկտրաագրեգատների վերանորոգման ծառայություններ	50611100/503	400000	1200000	2000000

* *Վճարման ենթակա գումարը ներկայացված է՝ ամբողջական կարգով:*

ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ

Ս. ՍԱՀԱԿՅԱՆ

«Արման Սվազյան» Ա/Ձ

Ա. ՍՎԱԶՅԱՆ